

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ «Ալիք Մեդիա Հայաստան»-ին տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին.

1□ Սեպտեմբերի 6-ից սկսած Վայքում արցախցիների հաշվառման կետում քանի՞ արցախցի է գրանցվել:

2□ Այս պահի տվյալներով քանի՞ արցախցի է հաստատվել Վայոց ձորում: Ո՞ր համայնքներում են հիմնականում հաստատվել: Կա՞ն առանձնացված տվյալներ:

3□ Համայնքապետարաններում արցախցիների գրանցումները շարունակվո՞ւմ են, հոսքն ինչպիսի՞ն է:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

«Ալիք Մեդիա Հայաստան» լրատվական-վերլուծական կայքի լրագրող



Մարիամ Սարգսյան

(հեռ. 077556232, էլ.փոստ mariamsjournalist@gmail.com) 10.05.2023 թ.

Խմբագրության հասցե՝ ք. Երևան, Կորյունի 6

